



ԱՆՈՒՇ ԳԱՆԻԵԼՅԱՆ

**Արցախի պետական համալսարանի «Տնփեսա-իրավաբանական»
ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ**

**ԻՐԱՎԱՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏՏԱԿԱՆ ՏԻՊԸ
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ՎԼԱԳԻԿ ՆԵՐՍԵՍՅԱՆՑԻ ԱԶԱՏԱԿԱՆ-
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Լեգիստական իրավահասկացողության և իրավագիտության լեգիստական հայեցակարգի հիմքում ընկած է իրավունքի՝ որպես հրամանի, որպես պետության հարկադիր սահմանումների, որպես պաշտոնական իշխանության կողմից նախատեսված համապարտադիր կանոնների (նորմերի) համակցության (համակարգի) հասկացությունը:

Լեգիստները (լատ. lex- «օրենք» բառից) որպես իրավունքի մասին պոզիտիվիստական ուսմունքի կողմնակիցներ ժխտում են, ինչպես իրենք են ասում, իրավունքի էության, օբյեկտիվ բնույթի, գաղափարների, արժեքների մասին կեղծ, «մետաֆիզիկական» դրույթները: Լեգիստների համար իրավունքը միայն պոզիտիվ (իրպես և էմպիրիկորեն տրված) երևույթ է, այսինքն՝ պաշտոնական-իշխանական, հարկադիր և պարտադիր ցանկացած (այդ թվում և կամայական) նորմատիվ բնույթի սահմանում: Փաստորեն, լեգիստների մոտ իրավունքի էությունը իշխանական հարկադրականությունն է՝ իշխանության հրամանը, քանի որ հենց այդ հատկանիշով են նրանք իրավունքը տարանջատում «ոչ իրավունքից»:

Նոր ժամանակաշրջանում լեգիստական մոտեցումը հիմնավորել է Թոմաս Հոբսը՝ բացարձակ պետության՝ Լեիաֆանի ջատագովր: Լեիաֆանը դա բնության ուժի տեսքով պատկերված հրեշի անունն է, որը ստորացնում է մարդուն: Թոմաս Հոբսը այդ պատկերը օգտագործում է հզոր պետության («մահկանացու Աստծո») նկարագրման համար: «Օրենքի իրավական ուժը,- շեշտում էր Հոբսը,- կայանում է միայն նրանում, որ այն հանդիսանում է ինքնիշխանի հրամանը»: Ընդ որում «օրենքի» տակ նկատի է առնվում ամ-

բողջ գործող (պոզիտիվ) իրավունքը: Հետագայում այդպիսի իրավահասկացողությունը կիրառվել է, այսպես կոչված, «իրավաբանական պոզիտիվիզմի» և նեոպոզիտիվիզմի տարբեր ուղղությունների ներկայացուցիչների կողմից, որը, ակադեմիկոս Վ.Ներսեսյանցի կարծիքով, ըստ էության համարվում է ոչ թե իրավաբանական, այլ հենց լեգիստական պոզիտիվիզմ:

Կոնկրետ պատմական առումով «իրավաբանական պոզիտիվիզմի» ձևավորումը և զարգացումը կապված էր բուրժուական կառուցակարգի հաղթանակի և ուժեղացման, պետության դերի ամրապնդման և այդ պայմաններում իրավունքի աղբյուրների համակարգում պետական նորմատիվ իրավական ակտերի նշանակության բարձրացման հետ:

Գաղափարական առումով «իրավաբանական պոզիտիվիզմը» արտացոլել է օրենքում իրենց իրավական հավակնությունների պաշտոնական ամրագրմանը հասած բուրժուազիայի հաղթած դասակարգի փոփոխված իրավաբանական աշխարհայացքը, առկա պաշտոնական իրավակարգի պաշտպանությունը ամեն տեսակի քննադատական և ընդդիմադիր հնչեղություն ունեցող պահանջներից և «բնական», «կատարյալ», «ողջամիտ», «արդար» և «պատշաճ» իրավունքի մասին պատկերացումներից:

«Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարների և դրույթների շարքին են դասվում իրավունքի մեկնաբանումը որպես իշխանության աշխատանքի արդյունքի, իշխանական հարկադրականության, որպես իրավունքի միակ տարբերակիչ յուրահատկության, իրավունքի վերլուծության ձևական-տրամաբանական և իրավաբանական-դոգ-



ԼՂՀ դատական իշխանություն

մատիկ մեթոդների, իրավունքի անջատումը և «մաքրումը» հասարակական հարաբերություններից, իսկ իրավագիտությունը՝ իրավունքի բնույթի, էության, արժեքների մասին «մետաֆիզիկական» դրույթներից և այլն: XIX դարում Անգլիայում նման պատկերացումներ են զարգացրել Ջ. Օստինը, Շ. Ամոսը և այլք, Գերմանիայում՝ Բ. Վինդշայդը, Կ. Հերբերը, Բ. Բերգերը, Փ. Լաբանդը, Ա. Յիկտելմանը և այլք, Ռուսաստանում՝ Եվ. Վասկովսկին, Ա. Հոլմստենը, Գ. Գրիմմը, Ս. Պահմանը, Գ. Շերշենևիչը: XX դարում այս մտեցումը ներկայացվել է «իրավաբանական նեոպոզիտիվիզմի» այնպիսի ուղղությունների կողմից, ինչպիսիք են Վ. Կատկովի «ընդհանուր լեզվաբանությամբ բարեփոխված իրավագիտությունը», Գ. Կելզենի «իրավունքի մասին մաքուր ուսմունքը», Հ. Հարտի «իրավունքի հայեցակարգը» և այլն:

Ջ. Օստինը, որը հանդիսանում է անգլիական վերլուծական (անալիտիկ) իրավագիտության նշանավոր ներկայացուցիչներից մեկը, իր «Պոզիտիվ իրավունքի փիլիսոփայություն» աշխատության մեջ իրավունքը բնութագրում է որպես «քաղաքական ղեկավարի կամ ինքնիշխանի կողմից սահմանված կանոնների հանգույց» և շեշտում է. «Ցանկացած իրավունք դա կարգադրություն է, հրաման»:

Շ. Ամոսը նշում էր, որ «իրավունքը դա պետության գերագույն քաղաքական իշխանության հրամանն է, որի նպատակ է հանդիսանում տվյալ միության անդամների գործողությունների հսկումը»:

Գ. Շերշենևիչը նույնպես հանգում էր նմանատիպ եզրակացության: «Իրավունքի ցանկացած նորմ,- գրում էր նա,- հրաման է» : Իրավունքը, նրա գնահատականով, դա «պետության ստեղծագործությունն է», իսկ պետական իշխանությունը նրա կողմից բնութագրվում է որպես այն սկզբնական փաստը, որի վրա հիմնվում են իրավունքի նորմերը՝ կառչելով միմյանցից: Իրավունքը ծագում է պետական իշխանության հրամանի հիման վրա. այդպիսին է իրավահասկացողության տվյալ տիպի համոզմունքը: Լեգիստների կարծիքով, այն ամենը, ինչն իշխանությունը հրամայում է, դա հենց իրավունքն է: Ներսեսյանը նշում է, որ իրավունքի տարբերություն

ընդ կամայականությունից դրանով իսկ գրվում է իր օբյեկտիվ և բովանդակային իմաստից, և այդպիսի մոտեցման կողմնակիցների համար ձեռք է բերում սուբյեկտիվ-ձևական բնույթ. իրական կամայականությունը, որը որոշակի ձևով (այս կամ այն նորմատիվ իրավական ակտի ձևով՝ օրենք, կարգադրագիր, հրամանագիր, շնորհագիր, որոշում և այլն) սանկցիավորվում է համապատասխան սուբյեկտի (պետական մարմնի) կողմից, ճանաչվում է իրավունք: Լեգիստական-պոզիտիվիստական իրավահասկացողության հետևորդները պետական իշխանության *հրամանին* վերագրում են «կախարդական» հնարավորություններ: Ստացվում է, որ այդպիսի հրամանի միջոցով լուծվում են ոչ միայն սուբյեկտիվ (օրենսդրության նորմերի ձևակերպումը), այլև օբյեկտիվ (իրավունքի ձևավորումը, ստեղծումը), ինչպես նաև գիտական բնույթի (իրավունքի յուրահատկության, այլ սոցիալական նորմերից նրա տարբերության բացահայտումը և այլն) խնդիրներ:

Նեոպոզիտիվիստները նույնպես իրավունքը մեկնաբանում են որպես իշխանության հրաման և հարկադիր կարգ, չնայած նրանց հայտարարություններին՝ «մաքրել» իրավագիտությունը իրավունքի՝ որպես պետության արտադրանքի մասին նախկին էթատիստական պատկերացումներից և նրանց փորձերին՝ ձևական-տրամաբանական ձևով հիմնավորել, որ իրենց կողմից առաջադրվող և պաշտպանվող հարկադրական-հրամայական իրավունքը իր իրականությունը ստանում է ոչ թե պետությունից, այլ ենթադրյալ հիմնական նորմից (*Հ. Կելզեն*) կամ էլ մի ինչ-որ փաստացի «վերջին կանոնից»՝ «ճանաչման բարձրագույն կանոնից» (*Գ. Հարտ*):

«Իրավունքի փիլիսոփայություն: Ազատական-իրավաբանական հայեցակարգ» աշխատության մեջ Վ.Ս. Ներսեսյանը հանգում է այն եզրակացության, որ լեգիզմը (դրաբոլոր տարբերակներով՝ հին լեգիզմից մինչև իրավաբանական նեոպոզիտիվիզմի ժամանակակից վերլուծական և նորմատիվիստական հայեցակարգերը) օրենքը որպես երևույթ անջատում է դրա իրավական էությունից, ժխտում է օրենքի օբյեկտիվ իրավական հատկությունները, բնութագրիչ գծերը, օրենքը մեկնաբանում է որպես օրենսդիր իշխա-



նության կամքի (և կամայականության) արդյունք: Դրա համար իրավունքի յուրահատկությունը, որի տակ պոզիտիվիստները նկատի են ունենում օրենքը (պոզիտիվ իրավունք), այդպիսի իրավահասկացողության դեպքում անխուսափելիորեն հանգում է իրավունքի հարկադիր բնույթին: Ընդ որում իրավունքի այդ հարկադրականությունը մեկնաբանվում է ոչ թե որպես իրավունքի օբյեկտիվ հատկությունների հետևանք, այլ որպես իրավակազմավորող և իրավաորոշիչ գործոն, որպես իրավունքի ուժային սկզբնաղբյուր: Եվ այստեղ հենց իշխանության ուժի հիման վրա է ծագում բռնի, հրամայական իրավունքը:

Լեգիտատական տեսության համաձայն՝ իրավունքի մասին ճշմարտությունը տրված է օրենսդրի (ինքնիշխանի, պետության) կամքը, դիրքորոշումը, կարծիքը արտահայտող օրենքում: Դրա համար իրավունքի ճշմարիտ իմացությունն այստեղ կրում է կարծիքի, չնայած և պաշտոնական-իշխանական կարծիքի բնույթ:

Այդպիսի իրավահասկացողության տրամաբանության հիման վրա՝ օրենք ստեղծող իշխանությունն է իսկապես իմանում, թե ինչ է իրավունքը և ինչով է այն տարբերվում ոչ իրավունքից: Իսկ գիտությունը լավագույն դեպքում կարող է պատշաճ կերպով ընկալել և արտահայտել օրենքում (գործող իրավունքում) մարմնավորված այդ իշխանական-հրամայական կարծիքը:

Ակադեմիկոս Վ.Ս.Ներսեսյանցը մատնանշում է, որ լեգիզմի տեսական-ճանաչողական շահը լրիվությամբ հիմնված է գործող (պոզիտիվ) իրավունքի վրա: Պոզիտիվիստները մերժում են այն ամենը, ինչը դուրս է գալիս էմպիրիկորեն տրված պոզիտիվ իրավունքի շրջանակներից, իրավունքի էության, գաղափարի, արժեքի մասին բոլոր դատողությունները՝ համարելով դրանք մետաֆիզիկական, սքոլաստիկական, թվայցալ, իրավական իմաստ և նշանակություն չունեցող հասկացություններ:

Պոզիտիվիստները առավել խիստ կերպով քննադատում են բնաիրավական ուսմունքները: Ընդ որում բնաիրավական ուսմունքների շարքին են դասում իրավունքի և օրենքի տարանջատման բոլոր հայեցակարգերը, այսինքն՝ իրավունքի մասին այն բոլոր

տեսական դատողությունները, որոնք չեն համընկնում օրենքի հիմնական դրույթների հետ: Պոզիտիվիստական գնոսեոլոգիան (իմացաբանությունը) դրանով իսկ, ըստ էության, մերժում է իրավունքի տեսությունը և ճանաչում է միայն օրենքի, օրինագիտության մասին ուսմունքը, որի առարկան է հանդիսանում պոզիտիվ իրավունքը, իսկ նպատակը՝ իրավունքի դրզման, այսինքն՝ գործող իրավունքի, դրա հետագոտման, մեկնաբանման, դասակարգման, համակարգման մեթոդների, կանոնների և հնարքների մասին հիմնական անփոփոխ դրույթների (հեղինակային կարծիքներ, դիրքորոշումներ, մոտեցումներ) համակցությունը:

Անշուշտ, պոզիտիվ իրավունքի աղբյուրների հետազոտումը, մեկնաբանումը, դասակարգումը և աստիճանավորումը, դրանց նորմատիվ բովանդակության բացահայտումը, իրավաբանական տեխնիկայի և իրավաբանական վերլուծության հնարքների և մեթոդների մշակումը իրենից ներկայացնում է գործող իրավունքի ճանաչման և իմացության կարևորագույն բաղկացուցիչ մասերը մեկը:

Ներսեսյանցը նշում է, որ օրենքի պոզիտիվիստական իմացաբանությունը կենտրոնացված է ոչ թե իրավունքի էության ճանաչման և գործող իրավունքի մասին նոր (փաստացիորեն տրված օրենքում բացակայող) գիտելիքների վրա, այլ իրավունքի՝ որպես արդեն իսկ բացահայտված երևույթի համարժեք նկարագրման վրա: Լեգիտատական իրավահասկացողության համաձայն՝ իրավունքի մասին բոլոր գիտելիքները տրված են պոզիտիվ իրավունքի մեջ, և պոզիտիվիստական տեսության հիմնական խնդիրն է հանդիսանում օրենքի տեքստի, դրանում արտացոլված օրենսդրի կամքի, դիրքորոշման և կարծիքի ճիշտ ու պատշաճ մեկնաբանումը: Հենց դրանով է պայմանավորված պոզիտիվիստների (հատկապես վերլուծական իրավագիտության ներկայացուցիչների) խորը հետաքրքրությունը օրենքի լեզվաբանական և տեքստային մեկնաբանության նկատմամբ՝ դրա իրավական իմաստի և բովանդակության ակնհայտ անտեսմամբ: Այդպիսի մոտեցման դեպքում իրավաբանական իմացաբանությունը փոխարինվում է լեգիտատական լեզվաբանությամբ, որի համաձայն՝ ամեն տեսակի ոչ



պոզիտիվիստական հասկացությունները, գաղափարները և հայեցակարգերը (իրավունքի էության, գաղափարների, բնական իրավունքի, մարդու անօտարելի իրավունքների և այլնի մասին) կեղծ բառեր են, լեզվական խաբկանքներ և սոփեստություններ (որոնք հիմնված են տրամաբանության կանոնների կանխամտածված խախտման վրա), սխալ բառօգտագործման արդյունք:

Նման հայացքներ է զարգացրել նշանավոր պոզիտիվիստ Ի. Բենտամը, որը զգալի ազդեցություն է ունեցել «վերլուծական իրավագիտության» կայացման վրա: Բենտամի կարծիքով՝ բնական իրավունքը դա խոսքային պատրանք է, փոխաբերություն, իսկ մարդու անօտարելի իրավունքները՝ երևակայության ցնորք: Բենտամի առաջադրած այս տեսության հետագա մշակումը իրականացվել է կելզենյան ՝ իրավունքի մասին «մաքուր» ուսմունքի ներկայացուցիչների կողմից:

Ռուսական նեոպոզիտիվիստական տեսության ներկայացուցիչ Վ.Ղ. Կատկովը նշում էր, որ «իրավունքը դա հենց օրենքն է՝ լայն իմաստով» և փորձում էր լրիվությամբ հաղթահարել իրավունքի հասկացության բնորոշումը՝ որպես մտածողության հպատակության արդյունքի և «իրավունքը» փոխարինել իշխանական «օրենքով»: Նա գրում էր. ««Իրավունք» երևույթը գոյություն չունի այն իմաստով, ինչով գոյություն ունեն այնպիսի հատուկ երևույթները, ինչպիսիք են «օրենքը», «պետությունը», «կանոնը» կամ «նորմը»:

Իրավաբանական իրավահասկացողությունը ճանաչում է իրավունքի և օրենքի հիմնահարցերի հետազոտման լեզվաբանական, տեքստային, կառուցվածքային, տրամաբանական-վերլուծական, իրավաբանական-գաղափարային ուղղությունների, հնարքների և մեթոդների տեսական-ճանաչողական և գործնական նշանակությունը: Սակայն իրավունքի նկատմամբ իրավաբանական մոտեցման շրջանակներում խոսքը գնում է ոչ թե իրավունքի և օրենքի, ինչպես նաև իրավունքի տեսության և օրենքի մասին ուսմունքի փոխկապվածության, այլև իրավունքի բազմակողմանի ճանաչման գործընթացում բոլոր իմացաբանական հնարքների, միջոցների և հնարավորությունների մասին՝ իրավունքի և

օրենքի վերաբերյալ ճշմարիտ գիտելիքներ ստանալու նպատակով:

Արժեբանական (աբսոլյուտիստական) առումով լեզիվներ, օրենքի և իրավունքի ճանաչման, իրավունքի՝ օրենքից և օրենսդրի կամքից անկախ օբյեկտիվ բնութագրիչ գծերի և հատկությունների ժխտման ուժով, ըստ էության մերժում է իրավական արժեքները և ճանաչում է միայն օրենքի (պոզիտիվ իրավունքի) արժեքը: Ընդ որում պոզիտիվիստների կողմից ճանաչվող օրենքի «արժեքը» իրականում զրկված է արժեքային իմաստից: Այն միայն օրենքի համապարտադիր նշանակությունն է, իշխանական հրամայականությունը:

Այս առումով առավել հատկանշական է Կելզենի *ծայրահեղ-պոզիտիվիստական մոտեցումը*, որի համաձայն՝ իրավունքը արժեք ունի միայն որպես հրաման, որպես հրամայական (իմպերատիվ) նորմ: Այս իմաստով նրա կողմից իրավունքը բնութագրվում է որպես *պարտադրականության չե*: «Չի կարելի ասել, ինչպես դա հաճախ արվում է,- գրում է Կելզենը,- որ իրավունքը իրենից ներկայացնում է ոչ միայն նորմ, այլ նաև կազմում և արտահայտում է որոշակի արժեք (այսպիսի բնորոշումը իմաստ ունի միայն բացարձակ աստվածային արժեքի դեպքում): Քանի որ իրավունքը արժեք է հանդիսանում միայն նրա համար, որ այն նորմ է...»:

Սակայն այդ «նորմը» Կելզենի մոտ դա հենց «մաքուր» պարտադրականությունն է, այլ ոչ թե հավասարության, ազատության, արդարության դրսևորումը: Այն իր մեջ չի պարունակում արժեքաբանական բնույթի որևէ իրավական հատկություն: Կելզենյան «նորմի» նպատակն է պոզիտիվ իրավունքի հրամայական բնույթը փոխանցել կամայականությանը: «Ցանկացած կամայական բովանդակություն,- նշում է Կելզենը,- կարող է լինել իրավական: Գոյություն չունի մարդկային այնպիսի վարքագիծ, որը իր բովանդակային առումով գիտակցաբար չկարողանար կազմել իրավական նորմի բաղկացուցիչ մասը»:

Փորձելով ամփոփել վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ լեզիստական գրականության մեջ լայն տարածում է գտել իրավունքի սահմանումը որպես պետության կողմից սանկցի-



ավորված և հաստատված ու նրա հարկադիր ուժով ապահովված նորմերի համակարգ: Ընդ որում ճիշտ է, որ պաշտոնապես գործող իրավունքի դրույթները հաստատվում են պետության կողմից և ապահովվում նրա հարկադրական ուժով, սակայն դա բավական չէ իրավունքի ճիշտ բնորոշման, իրավական և պաշտոնական-իշխանական բնույթի այլ երևույթների մեկնաբանման համար, քանի որ այդպիսի լեգիտական մոտեցման մեջ չկա մի այնպիսի չափանիշ, որի հիման վրա հնարավոր կլիներ իրավունքը տարբերել կամայականությունից, իրավական նորմը՝ պետական իշխանության կամայական սահմանումներից, իրավական օրենքը՝ ոչ իրավական օրենքից: